



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
Ա Ր Մ Ա Վ Ի Ր Ի Մ Ա Ր Ջ Պ Ե Տ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

<<----->> ----- 2020թ.
ք. Արմավիր

N ----

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐՋՈՒՄ ՆՈՐ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ (COVID-19) ՀԱՄԱՃԱՐԱԿԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՍԱՀՄԱՆԱՓԱԿԻՉ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ՄՏՑՆԵԼՈՒ ԵՎ ՄԱՐՋՈՒՄ ՏԻՐՈՂ ԻԿՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տարածքային կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, 14-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 6-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 16-ի N298-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության պարետի 2020 թվականի մարտի 17-ի N2 որոշումը և 2020 թվականի մարտի 17-ի NՑ/6-2020 ցուցումը, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի տարածքում նոր կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) համաճարակի կանխարգելման նպատակով.

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում մտցնել սահմանափակիչ միջոցառումներ՝ մինչև 2020 թվականի ապրիլի 14-ը ժամը 17:00-ն՝ համաձայն հավելվածի:
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետին (Հ. Հարությունյան), տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետի պարտականությունները կատարողին (Գ. Գևորգյան) և կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի պաշտոնակատարին (Ս. Բուդաղյան)՝ իրականացնել մարզում տիրող իրավիճակի վերաբերյալ մշտադիտարկում և արդյունքների մասին պարբերաբար զեկուցել Հայաստանի Հանրապետության մարզպետին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐՋՊԵՏ՝

Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

 Invalid signature



VERIFIED OCSP 3/19/2020 16:08:17 GMT+4

Signed by: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի
2020 թվականի մարտի 19-ի
ՄՄՈ/ -2020 որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՈՒՄ ՆՈՐ
ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ (COVID-19) ՀԱՄԱՃԱՐԱԿԻ
ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿԻՉ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում (այսուհետ՝ մարզում) սահմանափակիչ միջոցառումներ են 20 և ավելի անձանց մասնակցությամբ անցկացվող հետևյալ միջոցառումները՝

- 1) համերգները, ցուցահանդեսները, ցուցադրությունները, թատերական ներկայացումները և սպորտային, մշակութային, կրթական այլ միջոցառումները.
- 2) ժամանցային միջոցառումները.
- 3) տոնական և հիշատակի միջոցառումները, ներառյալ, բայց չսահմանափակվելով ծննդյան (տարեդարձի), հարսանյաց (նշանադրության), թաղման միջոցառումները,
- 4) պարետի ցուցումով որպես հանրային միջոցառում որակված այլ միջոցառումներ:

2. Հայաստանի Հանրապետության պարետի 2020 թվականի մարտի 17-ի ցուցումի համաձայն ապահովել՝

1) մարզի ամբողջ տարածքում հոգեհանգստի և/կամ հուղարկավորության արարողությունների վայրի և ժամի մասին տեղեկատվության ստացումը՝ տեղի ունեցող յուրաքանչյուր արարողության ժամանակ մեկ ներկայացուցիչ ոստիկանությունից և մեկ ներկայացուցիչ մարզի տեղական ինքնակառավարման մարմնից պատվիրակելու, հսկողություն սահմանելու նպատակով.

2) Հայաստանի Հանրապետության ոստիկանության Արմավիրի մարզային վարչության համապատասխան ստորաբաժանումից և մարզի տեղական ինքնակառավարման մարմնից մեկական անձի պատվիրակումը՝ 20 և ավելի անձանց մասնակցությամբ հանրային միջոցառումների արգելումը, հսկողությունն իրականացնելու նպատակով.

3) մարզի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից համայնքներում Հայաստանի Հանրապետության պարետի 2020 թվականի մարտի 17-ի «Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում կիրառվող սահմանափակումների վերաբերյալ» N2 որոշման իրազեկումը:

Գլխավոր քարտուղարի
պաշտոնակատար՝

Վ. Վարդազարյան

 Недействительная подпись

X 

VERIFIED OCSP 19.03.2020 15:56:04 GMT+4

Подписано: VARDAZARYAN VARDAN 1704780217